«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության առանձնահատկությունների դիտարկմանը հասարակագիտություն առարկայի դասավանդման շրջանակներում:

ՀԵՂԻՆԱԿ՝ Լիլիթ Կիրակոսյան

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/՝ IV խումբ, Պատմություն

ՍԵՎԱՆ **2023**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

§1. ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԱՏԻՎ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ 5

1.1 Հիմնական իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության ընդհանուր բնութագիրը.....5

1.2 Աշակերտների հիմնական իրավունքները և պարտականությունները 7

§2. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՏՎԻ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ 11

2.1 Սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության միջոցներն ու առանձնահատկությունները հասարակագիտություն առարկայի դասավանդման ընթացքում12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 13

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքը նվիրված է սովորողի իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության առանձնահատկությունների դիտարկմանը հասարակագիտություն առարկայի դասավանդման շրջանակներում:

Թեմայի արդիականությունը. Կայուն իրավակարգի ապահովումն ու մարդու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը համարվում է յուրաքանչյուր իրավական պետությայն առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկը, որը պահանջում է մշտական հոգածություն և աշխատանք: Իրավական պետության հաստատումը Սահմանադրությամբ, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների հռչակումը դեռ չի խոսում այն մասին, որ դրանք իրապես կենսագործված են իրական կյանքում, հենց այդ պատճառով էլ այս գաղափարների ապահովումն ու իրացումը ենթադրում է մշտական, չդադարող գործընթաց:

Իրավակարգի ապահովման, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման հարցում չափազանց մեծ դերակատարում ունի դպրոցը, քանի որ բոլոր անհատները ձևավորվում են դպրոցում:

Ուստի գտնում ենք, որ դպրոցում սովորողների իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովումը մի կողմից կարևոր է զուտ երեխաների իրավունքների պաշտպանության սկզբունքների ապահովման առումով, մյուս կողմից դա նպաստում է իրավապահ, բարձր իրավագիտակցություն ունեցող անհատների ձևավորմանը, որը մեր պետության առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկն է: Հետևաբար այս հարցերը խիստ արդիական են յուրաքանչյուր ժամանակահատվածում, քանի որ միայն այդ հարցերի քննարկման և ուսումնասիրման շնորհիվ է հնարավոր վեր հանել դրանցում պարունակվող հիմնախնդիրները, իսկ այդ հիմնախնդիրների վերհանման և դրանց համարժեք լուծումների առաջադրման միջոցով է հնարավոր առավել բարելավել տվյալ ոլորտը:

Վերջիվերջո, ինչի՞ համար է ստեղծված իրավունքը, կարծում ենք, որ ծառայի որպես բարիք մարդկության համար: Իսկ մարդկության համար ամենամեծ բարիքը հենց իր իրավունքների և ազատությունների արդյունավետ և երաշխավորված պաշտպանությունն է, ինչը նույնպես մշտապես արդիական է, քանի որ մարդկանց իրավունքների խախտման դեպքերը քիչ չեն, ուստի դրանց պաշտպանության մեխանիզմների ուսումնասիրումը միշտ անհրաժեշտ է, իսկ այս հարցում դպրոցի և ուսուցչի դերը, թերևս, անգնահատելի է:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները. Սույն ուսումնասիրության իրականացումը նպատակ է հետապնդում գնահատել դպրոցում սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության արդի վիճակը, բացահայտել այդ հարցում առկա հիմնախնդիրները, ինչպես նաև ներկայացնել միջոցներ, որոնք կնպաստեն դպրոցում սովորողների իրավունքների, ազատությունների, պատվի և արժանապատվության երաշխավորված պաշտպանությանը:

Վերոնշյալ նպատակի իրագործման համար մեր առջև դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✓ Բացահայտել հիմնական իրավունքների, ազատությունների, պատվի և արժանապատվության հիմնական բովանդակությունն ու նշանակությունը,
- ✓ Ներկայացնել սովորողի իրավունքների, ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության հիմնական միջոցներն ու մեխանիզմները,
- ✓ Ներկայացնել այն հնարները, որոնց կիրառմամբ հնարավոր է հասարակագիտության դասի շրջանակներում ապահովել սովորողների իրավունքների, ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանություն:

§1. ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԱՏԻՎԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1.1 Հիմնական իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության ընդհանուր բնութագիրը

Անձի իրավական վիճակի հիմունքների առավել կարևոր տարրն է նրա հիմնական իրավունքները, ազատությունները և պարտականությունները, որոնք անօտարելի են մարդուց, քաղաքացուց, պատկանում են ամեն մի անձի, որպես իրավունքի սուբյեկտի՝ անկախ վերջինիս կողմից իր իրավունակության իրացման, կազմում են նրա անբաժանելի հատկանիշը: Հիմնական իրավունքները, ազատությունները և պարտականությունները կազմում են մարդու իրավական վիճակի հիմքը, նրա միջուկը, այն նվազագույն քանակը, առանց որի մարդը չի կարող հանդես գալ որպես քաղաքական և քաղաքացիական հասարակության լիարժեք անդամ[1]:Անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները, պատիվը նարժանապատվությունն ունեն այն աստիճան կարևորություն, որ իրենց հստակամրագրումն են ստացել ՀՀ Սահմանադրությամբ, ավելին, դրանցպաշտպանության իմպերատիվ պահանջն իր արտացոլումն է գտել Սահմանադրության հենց առաջին՝ սահմանադրական կարգի հիմունքներ գլխում: Մասնավորապես՝ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդուանօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատություններիանքակտելի հիմքն է: Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների նազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանությանպարտականություններն են: Հանրային իշխանությունը սահմանափակված էմարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես

[1] Այվազյան Ն. Ա., Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Գիրք առաջին,Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2016, էջ 216:

անմիջականորեն գործող իրավունք[2]: Նախքան այս ձևակերպումների բովանդակության բացահայտմանն անդրադառնալը, ցանկանում ենք նշել մի կարևոր հանգամանք առ այն, որ Սահմանադրության 203-րդ հոդվածի համաձայն՝ մարդու արժանապատվության, հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ամրագրող 3-րդ հոդվածն անփոփոխելի է, ինչը նշանակում է, որ այդ հոդվածով ամրագրված կարգավորումները հանդիսանում են պետության հիմքը և ցանկացած իրավիճակի փոփոխության դեպքում անգամ ենթակա չեն փոփոխման: Վերոգրյալից կարող ենք հետևություն անել, որ պետության քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը պետք է լինի անձի հիմնական իրավունքների և ազատությունների, արժանապատվության և պատվի պաշտպանությունն ու երաշխավորումը:

Այս առումով գտնում ենք, որ մարդու իրավունքների հռչակումից բացի՝ կարևոր է դրանց կենսագործումը, այսինքն՝ ստեղծվեն բարենպաստ պայմաններ դրանք կյանքի կոչելու համար, ապահովվեն դրանց պահպանությունը և պաշտպանությունը, վերացվեն այն արգելքները, որոնք խանգարում են մարդկանց՝ օգտագործելու իրենց հնարավորությունները: Այլ կերպ ասած՝ մարդու իրավունքները պետք է լինեն երաշխավորված: Մարդու իրավունքների երաշխիքները պայմաններ, կառուցակարգեր, եղանակներ ու միջոցներ են՝ ուղղված իրավունքների և ազատությունների կենսագործմանը, դրանց պահպանությանը և պատշաճ պաշտպանությանը: Առանց երաշխիքների մարդու իրավունքները կմնան բարի ցանկություն, պատվիրան և չեն կարող կատարել իրենց հասարակական առաքելությունը:

Կարծում ենք, որ իրավունքը, ազատությունը, պատիվը և արժանապատվությունը երաշխավորված են առաջին հերթին այն դեպքում, երբ անձն ունի ամբողջական և հավաստի տեղեկատվություն այդ իրավունքների և ազատությունների վերաբերյալ: Հենց այս հարցում անգնահատելի մեծ դեր ունի դպրոցն ու կրթությունը, քանի որ ամեն ինչ սկսվում է դպրոցից: Ուստի իրավական գիտելիքներով օժտված քաղաքացիների ձևավորումը սկսվում է դպրոցից, որի

[2] ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995թ., 2015 թվականի փոփոխություններով:

համար էլ նախ անհրաժեշտ է ապահովել իրավական կրթության և դաստիարակության իրականացումը, ինչպես նաև աշակերտների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, որպեսզի հենց իրենց օրինակով տեսնեն, ընկալեն, սովորեն և գիտակցեն իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության կարևորությունն ու անհրաժեշտությունը:

Գտնում ենք, որ դպրոցն այն վայրն է, լավագույն և բարենպաստ հարթակը, որտեղ հնարավոր է ձևավորել իրավական դաստիարակությամբ, կայուն իրավագիտակցություն ունեցող անհատներ, իսկ այս հարցում կարևոր է ոչ միայն համապատասխան իրավական գիտելիքների փոխանցումը, այլև այդ գիտելիքները, գաղափարներն ու սկզբունքները հենց իրական կյանքում կենսագործելը, որովհետև աշակերտները դառնում են այնպիսին, ինչպիսին նրանց սովորեցնում ենք լինել, դրսևորում են այնպիսի վարքագիծ, ինչպիսի վարքագծի օրինակ տեսնում են իրենց առջև, ուստի եթե դպրոցում աշակերտների իրավունքները, ազատությունները, պատիվը և արժանապատվությունը լինի հարգված, պաշտպանված և երաշխավորված, նրանք կսկսեն իրականությունն ընկալել հենց այդ տեսանկյունից, և դուրս գալով մեծ կյանք, կկարողանան մի կողմից պաշտպանել իրենց իրավունքները, մյուս կողմից՝ գիտակցել դիմացինի իրավունքների պաշտպանության կարևորությունը և զերծ կմնան օրինազանց վարքագծից:

Ամփոփելով մեր տեսակետները՝ կարող ենք նշել, որ իրավունքներն ու ազատությունները, պատիվը և արժանապատվությունը յուրաքանչյուր իրավական պետության հիմքն են, ուստի պետության քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը պետք է լինի կրթության ոլորտում իրավունքներին և ազատություններին մեծ դեր հատկացնելը ինչպես գիտելիքներով օժտելու, այնպես էլ դրանք կիրառելու առումներով:

1.2 Աշակերտների հիմնական իրավունքները և պարտականությունները

Գտնում ենք, որ յուրաքանչյուր ոլորտ, որտեղ հայտնվում է մարդը՝ անկախ իր ունեցած դերից, պետք է ունենա հստակ կարգավիճակ և այդ կարգավիճակից բխող

իրավունքներ ու պարտականություններ:

Նախքան աշակերտների իրավունքներին ու պարտականություններին անդրադառնալը, նախ հարկ է պարզել, թե ինչ նպատակներ են դրված պետության և դպրոցի առջև կրթության գործընթացի կազմակերպման շրջանակներում, քանի որ այդ նպատակների իրագործմանը պետք է ծառայեն և այդ նպատակների բովանդակությունից է կախված նաև աշակերտների իրավունքներն ու պարտականությունները:

Մասնավորապես՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի՝ «Հանրակրթության նպատակները և պետական քաղաքականության սկզբունքները» վերտառությամբ 5-րդ հոդվածով սահմանվում է.

« 1. Հանրակրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը:

2. Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը.

1) հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը.

2) հանրակրթության հավասար հնարավորությունները, մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին.

3) հանրակրթության բնագավառում ժողովրդավարական կառավարման սկզբունքների ապահովումը.

4) ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության,

գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը.

5) հանրակրթության որակի շարունակական բարելավումը, միջազգային չափանիշներին համապատասխանությունը, ինչպես նաև միջազգային կրթական համակարգին ինտեգրումը.

6) ուսումնական հաստատությունների ինքնավարության և պետական վերահսկողության հավասարակշռումը.

7) անկախ կազմակերպական-իրավական ձևից՝ ուսումնական հաստատությունների և դրանցում սովորողների ու աշխատողների իրավահավասարությունը.

8) հանրակրթական և այլ կրթական ծրագրերի փոխհամաձայնեցվածությունը[3]»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի շրջանակներում սահմանվում են սովորողի իրավունքները և պարտականությունները, որոնք հանգում են հետևյալին.

1. Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ:

Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

2. Սովորողն իրավունք ունի՝

1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.

[3] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը, 10.07.2009 թ.:

2) ծնողի համաձայնությամբ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև տվյալ
ուսումնական հաստատությունում առկա հոսքը, ստանալու կրթական վճարովի ծառայություններ.
3) անվճար օգտվելու ուսումնական հաստատության ուսումնանյութական բազայից.
4) մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների.

5) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից,
մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը.
6) ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.
7) ազատորեն փնտրելու և մատչելիորեն ստանալու ցանկացած տեղեկատվություն, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.
8) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.

9) օգտվելու օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:
3. Սովորողը պարտավոր է՝

1) կատարել ուսումնական հաստատության կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները.
2) ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների և կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները.
3) հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին.

4) կատարել օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ[4]:

Ինչպես տեսնում ենք, օրենսդրությամբ հստակ սահմանված են սովորողների իրավունքներն ու պարտականությունները, սակայն ինչպես բոլոր հարցերում, այստեղ ևս կարևոր է ոչ միայն սահմանումը, այլև դրանց իրական կենսագործումը,որի հարցում էլ մեծ դեր ունի դպրոցն ու ուսուցիչը: Հենց վերոնշյալ հարցերի դիտարկմանն է ուղղված սույն հետազոտական աշխատանքը, որի շրջանակներում ցանկանում ենք նշել, որ փորձը վկայում է, որ մի շարք աշակերտները տեղեկացվածչեն վերոնշյալ իրավունքներից, ուստի դրանց խախտման դեպքում կարող են նույնիսկ չհասկանալ, որ իրենց իրավունքները խախտվում են: Ուստի այս հարցում դպրոցի և ուսուցչի վրա դրված է մեծ և կարևոր առաքելություն, այն է՝ կրթել, տեղեկացնել սովորողներին իրենց իրավունքների մասին, ներկայացնել դրանց իրացման պայմաններն ու կարգը, հստակեցնել դրանց սահմանները, որպեսզի դպրոցից դուրս եկող անհատները լինել իրավապահ, հարգեն օրենքները, իմանան իրենց իրավունքները և այդ ձևով հոգածություն դրսևորեն ինչպես իրենց, այնպես էլ դիմացինի իրավունքների նկատմամբ:

§2. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՊԱՏՎԻ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

2.1 Սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության միջոցներն ու առանձնահատկությունները հասարակագիտություն առարկայի դասավանդման ընթացքում

[4] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը, 10.07.2009 թ

Դպրոցը բազմաթիվ շահակիցներ ունեցող հաստատություն է: Դպրոցի արդյունավետ գործունեությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ բոլոր շահակիցները՝ պետությունը, սովորողները, ծնողները, ուսուցիչները, կառավարիչները, հասարակությունը առաջնորդվում են ժողովրդավարության և մարդու իրավունքների սկզբունքներով: Դպրոցը զգայուն կառույց է, ուստի որևէ շահակցի կամ շահակիցների խմբի անտեսումը ստեղծում է խոչընդոտներ: Միայն փոխադարձ հարգանքի և մասնակցային մոտեցման միջոցով է հնարավոր դպրոցի արդյունավետ գործունեությունը:

Սովորողներն ուսուցման գործընթացում անխուսափելիորեն բախվում են սխալվելու, ռիսկի դիմելու, օգնություն և հոգատարություն ակնկալելու խնդիրներին: Սովորողները կխուսափեն կրթության համար այդ բացառիկ հնարավորությունից, եթե չզգան, որ դպրոցի մշակույթը պատրաստ է հարգելու իրենց իրավունքները[5]:

Կարևոր է նաև երեխաների իրավունքների վերաբերյալ ուսուցիչներիպատշաճ տեղեկացվածությունը: Հենց այս նպատակն ունի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՅՈՒՆԻՍԵՖի համագործակցության արդյունքում ստեղծված «Եկեք սովորենք երեխայի իրավունքները» ուղեցույցը, որի միջոցով ուսուցիչները կարող են իրազեկվել երեխաների հիմնարար իրավունքների մասին, ինչպես նաև ստացած տեղեկությունները փոխանցել աշակերտներին: Դպրոցն այն հիմնական վայրերից է, որտեղ երեխան պետք է ձեռք բերի իր իրավունքների
վերաբերյալ գիտելիքներ և որտեղ երեխայի իրավունքները պետք է լինեն առավելագույնս պաշտպանված[6]:

Վերոգրյալի հաշվառմամբ կարող ենք նշել, որ ինչպես յուրաքանչյուր դասընթացի, հասարակագիտության դասընթացի շրջանակներում ևս հնարավոր է ապահովել սովորողների իրավունքների, ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանություն, որի իրագործման համար կարևոր է կիրառել հետևյալ քայլերը.

---

[5]Ժողովրդավարության և մարդու իրավունքների կրթության հայեցակարգ, Երևան, 2016, https://civitasarmenia.am/wp-content/uploads/2016/07/DHRE-policy-concept.pdf

1. Իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության առաջին քայլը այդ իրավունքները չխախտելն է, ինչպես նաև անհիմն, առանց իրավաչափ նպատակի, անհամաչափսահմանափակելը,
2. Երկրորդ կարևոր քայլը ուսուցիչների կողմից սովորողների իրավունքների, ազատությունների, պատվի և արժանապատվության վերաբերյալ բավարար գիտելիքների, տեղեկատվության իմացության ապահովումն է, որը կարող է իրականացվել տարբեր դասընթացների, սեմինարների միջոցով,
3. Երրորդ կարևոր քայլը սովորողներին իրենց իրավունքների, ազատությունների, պատվի և արժանապատվության վերաբերյալ բավարար և անհրաժեշտ գիտելիքներով օժտելն է, քանի որ առանց իրավունքների իմացության հնարավոր չէ լինել պաշտպանված:

Գտնում ենք, որ սրանք այն հիմնական և անհրաժեշտ միջոցներն են, որոնք պետք է կիրառել դասընթացի շրջանակներում, որպեսզի յուրաքանչյուր սովորող դպրոցում իրենց զգա պաշտպանված և ապահով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով աշխատանքի շրջանակներում ներկայացված տեսակետներն ու մոտեցումները, կատարված վերլուծությունները՝ ցանկանում ենք առանձնացնել հետևյալ եզրակացությունները.

[6] Եկեք սովորենք երեխայի իրավունքները, ուղեցույց ուսուցիչների համար, Երևան, 2021, էջ 7, https://www.ombuds.am/images/files/f7b9d3c275ce4be243e71e8624f07dd2.pdf

- Դպրոցն այն վայրն է, որտեղ ձևավորվում է սովորողը որպես անհատ, ուստի իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության մասին պատկերացումները ձևավորվում են հենց դպրոցում, հետևաբար այդ հարցում հարկ է դրսևորել մեծ ուշադրություն և ձեռնարկել համարժեք քայլեր սովորողների իրավունքների, ազատությունների, պատվի և արժանապատվության երաշխավորված պաշտպանության համար:
- Սովորողների իրավունքների և ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանությունը բարդ և համալիր գործընթաց է, որը ենթադրում է մի շարք, միմյանց հետ փոխկապակցված քայլերի ձեռնարկում, որոնց ընդհանուր նպատակը իրավունքների և ազատությունների իրական պաշտպանությունն ապահովելն է:
- Իրավունքների և ազատությունների պաշտպանության համար ձեռնարկվող միջոցները, նախատեսված ծրագրերը պետք է իրականացնել այն ուղղությամբ, որ սովորողն ինքը զգա և գիտակցի, որ դպրոցում իր իրավունքները լիովին պաշտպանված են:
- Պետք է հաշվի առնել, որ իրավունքների և ազատությունների պաշտպանության լավագույն միջոցը ոչ այնքան դրանց մասին իրազեկելն է, որքան այդ իրավունքները իրապես պաշտպանելը, դրանց խախտումներից զերծ մնալը, իրական օրինակով դրանց կենդանություն հաղորդելը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Առաջարկում ենք հասարակագիտության դասընթացի շրջանակներում նախ սովորողների նկատմամբ դրսևորել այնպիսի վերաբերմունք, որ վերջիններս զգան իրենց պաշտպանված և ապահով, որի իրականացման համար կարելի է յուրաքանչյուր դասընթացի սկզբում ընդամենը հինգ րոպե տրամադրել երեխաներին ասելու, որ իրենք ունենք իրավունքներ, որոնց պաշտպանությունն առաջին հերթին հենց ուսուցիչների հոգածության ներքո է:
- Առաջարկում ենք հասարակագիտության դասաժամերին պարբերաբար

ընտրել ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնարար իրավունքներից և ազատություններից որևէ մեկը,որի շնորհիվ կամրապնդվեն իրավուքների նազատությունների վերաբերյալ գիտելիքները:

- Առաջարկում ենք հասարակագիտության դասաժամերին ժամանակ առ ժամանակ իրականացնել փոքրիկ դատախաղեր, որի շրջանակներում սովորողները պետք է պաշտպանեն միմյանց իրավունքները: Այս խաղի արդյունքում երեխաները կզարգացնեն իրենց հմտությունները, միևնույն ժամանակ կպատկերացնեն, թե ինչպես պետք է պաշտպանել իրենց իրավունքներն ու ազատությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Այվազյան Ն. Ա., Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Գիրք առաջին, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2016,
2. Եկեք սովորենք երեխայի իրավունքները, ուղեցույց ուսուցիչների համար, Երևան, 2021, էջ 7, https://www.ombuds.am/images/files/f7b9d3c275ce4be243e71e8624f07dd2.pdf
3. Ժողովրդավարության և մարդու իրավունքների կրթության հայեցակարգ, Երևան, 2016, https://civitasarmenia.am/wp-content/uploads/2016/07/DHRE- policy-concept.pdf
4. ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995, 2015 թ. փոփոխություններով,
5. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը, 10.07.2009 թ.: